

ՀԱՊՀ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

01.01.2019 - 31.03.2019 ԹԹ.-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունն իր բնականոն գործունեությունն է իրականացրել ՀՀ օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:

Մասնավորապես.

1. 22.02.2019թ.-ին տեղի ունեցավ արհեստակցական կազմակերպության տարեկան համաժողովը, որի ժամանակ քննարկվեցին և հաստատվեցին Կազմակերպության 2018թ.-ի կանոնադրական և ֆինանսական գործունեության ստուգումների վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը, Կազմակերպության 2018թ.-ի տարեկան գործունեության մասին հաշվետվությունը, 2018թ.-ի տարեկան բյուջեի կատարողականը, 2019թ.-ի տարեկան բյուջեի նախահաշվի նախագիծը: Համաժողովում հաստատվեցին Կազմակերպության ծրագրերին 2019թ.-ին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները, արհկոմիտեի փոփոխված կազմը և Կազմակերպության լոգոտիպը:
2. Արհեստակցական կազմակերպության «Սոցիալական օգնություն» ծրագրով Կազմակերպության մեկ անդամի տրվել է դրամական օգնություն:
3. Արհեստակցական կազմակերպության «Ուրախություն և տոն» ծրագրով, ծննդյան հոբելյանական տարեդարձի կապակցությամբ, կազմակերպության մեկ անդամի տրվել է դրամական նվեր:
4. Արհեստակցական կազմակերպության «Ուշադրություն» ծրագրով Կազմակերպության մեկ անդամի տրվել է դրամական նվեր:
5. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է 3 նիստ: